

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը (այսուհետև՝ Կողմեր),

նպատակ ունենալով ամրապնդելու իրենց ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերը,

հաշվի առնելով իրենց երկրների սոցիալական և տնտեսական զարգացումը խթանելու և բարելավելու փոխադարձ հետաքրքրվածությունը,

համոզված լինելով, որ անհրաժեշտ է շեշտը դնել կայուն զարգացման վրա,

ընդունելով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տեխնիկական համագործակցության փոխադարձ առավելությունները, և

ցանկանալով զարգացնել տեխնիկական առաջընթացին նպաստող համագործակցությունը,

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈՂՎԱԾ I

Տեխնիկական համագործակցության մասին սույն Համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) նպատակն է Կողմերի նախանշած գերակա ոլորտներում տեխնիկական համագործակցության խթանումը:

ՀՈՂՎԱԾ II

Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման ընթացքում Կողմերը կարող են օգտվել եռակողմ համագործակցության մեխանիզմներից՝ այլ երկրների, միջազգային կազմակերպությունների և տարածաշրջանային գործակալությունների հետ եռակողմ համագործակցության միջոցով:

ՀՈՂՎԱԾ III

1. Սույն Համաձայնագրի ներքո տեխնիկական համագործակցության ծրագրերը և նախագծերը կիրականացվեն Լրացուցիչ համաձայնագրերի միջոցով:

2. Վերոնշյալ ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման համար անհրաժեշտ գործադիր մարմինները, համակարգող հաստատությունները և մյուս բաղադրիչները նույնպես կստեղծվեն Լրացուցիչ համաձայնագրերի միջոցով:

3. Կողմերը կարող են դիտարկել, ի թիվս այլնի, նաև հանրային և մասնավոր հատվածի հաստատությունների, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային գործակալությունների մասնակցությունը սույն Համաձայնագրի շրջանակում ծրագրերի, նախագծերի և գործողությունների մշակման գործում՝ Լրացուցիչ համաձայնագրերում համաձայնեցված կարգով:

4. Կողմերը համատեղ կամ առանձին կֆինանսավորեն Կողմերի հաստատած ծրագրերը, նախագծերը և գործողությունները և կարող են անհրաժեշտ ֆինանսավորում ներգրավել միջազգային կազմակերպություններից, հիմնադրամներից, տարածաշրջանային ու միջազգային ծրագրերից և այլ դոնորներից:

ՀՈԴՎԱԾ IV

1. Կողմերի ներկայացուցիչների միջև կանցկացվեն հանդիպումներ տեխնիկական համագործակցության ծրագրերին, նախագծերին և գործողություններին առնչվող այնպիսի հարցերի քննարկման նպատակով, ինչպիսիք են.

ա) տեխնիկական համագործակցության իրականացման համար հարմար ընդհանուր առաջնահերթություն ներկայացնող ոլորտների գնահատումն ու սահմանումը,

բ) երկու Կողմերի ընդունման համար մեխանիզմների և ընթացակարգերի մշակումը,

գ) աշխատանքային պլանների քննարկումը և հաստատումը,

դ) տեխնիկական համագործակցության ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման վերլուծությունը, հաստատումն ու վերահսկողությունը և

ե) սույն Համաձայնագրի ներքո ծրագրերի, նախագծերի և գործողությունների կատարման արդյունքների գնահատումը:

2. Հանդիպումների անցկացման վայրը և ժամանակը կհամաձայնեցվի դիվանագիտական ուղիներով:

ՀՈԴՎԱԾ V

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերը, տեղեկությունները և այլ

տվյալները հասանելի չեն լինի կամ չեն փոխանցվի երրորդ կողմերի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնությունը նախապես ստանալու:

ՀՈԴՎԱԾ VI

Յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագրի շրջանակում մյուս Կողմից ուղարկված անձնակազմին կտրամադրի անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն կեցության, տրանսպորտային միջոցների, հատուկ առաջադրանքներն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության հետ կապված հարցերում՝ Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված կարգով:

Հոդված VII

1. Փոխադարձության սկզբունքի հիման վրա յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի նշանակած անձնակազմին, ինչպես նաև նրանց խնամառուներին, եթե այդպիսիք կան, իր տարածքում իրենց պարտականություններն իրականացնելու համար տրամադրում է հետևյալը՝ պայմանով, որ այդ անձինք չլինեն ընդունող Կողմի քաղաքացիներ կամ օտարերկրացիներ, որոնք իր տարածքում մշտական բնակության իրավունք ունեն.

ա) դիվանագիտական ուղիներով հայցված վիզաներ՝ յուրաքանչյուր Կողմի կիրառելի կանոններին համապատասխան,

բ) անձնական իրերի նկատմամբ գանձվող՝ ներմուծման հարկերից և այլ տուրքերից ազատում կեցության առաջին վեց ամսվա ընթացքում՝ բացառությամբ այն հարկերի, որոնք վերաբերում են սկզբնական բնակեցման համար նախատեսված՝ պահեստավորման, փոխադրման կամ նմանատիպ այլ ծառայություններին, երբ հյուրընկալող երկրում օրինական մնալու ժամանակահատվածը գերազանցում է մեկ տարին: Այդ անձնական իրերը պարտականություններն ավարտելուց հետո պետք է վերաարտահանվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վճարվում են այն հարկերը, որոնցից դրանք սկզբում ազատվել էին,

գ) սույն հոդվածի «բ» կետի ներքո նախատեսված նույն ազատումը և սահմանափակումները, երբ վերոնշյալ ապրանքները վերաարտահանվում են,

դ) ընդունող կողմի տարածքում աշխատավարձերից գանձվող եկամտահարկից ազատում, եթե անձն աշխատանքի է ընդունվում ուղարկող Կողմի հաստատությունների կողմից: Ընդունող Կողմի հաստատությունների կողմից վճարվող վարձատրության կամ օրապահիկի դեպքում կկիրառվի ընդունող երկրի

օրենսդրությունը: Եթե Կողմերի միջև ստորագրված լինեն կրկնակի հարկման համաձայնագրեր, ապա կգերակայեն դրանց դրույթները:

ե) անձեռնմխելիություն սույն Համաձայնագրի ներքո ի պաշտոնե կատարած ցանկացած գործողության կապակցությամբ դատական հետապնդումից և

զ) ճգնաժամային իրավիճակում հայրենիք վերադառնալու միջոցներ:

2. Անձնակազմի ընտրությունը կատարում է ուղարկող Կողմը և պետք է հաստատվի ընդունող Կողմի կողմից:

ՀՈԴՎԱԾ VIII

Սույն Համաձայնագրի մեկնաբանության և կիրառման հետ կապված վեճերը կկարգավորվեն Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ IX

1. Այն ապրանքները, սարքավորումները և այլ իրերը, որոնք Կողմերից մեկը կարող է տրամադրել մյուս Կողմին սույն Համաձայնագրի ներքո ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման նպատակով, ինչպես սահմանված և հաստատված է համապատասխան լրացուցիչ համաձայնագրերով, ազատվում են արտահանման և ներմուծման հարկերից, տուրքերից և այլ գանձումներից՝ բացառությամբ մաքսային գանձումների, պահեստավորման, փոխադրման և հարակից այլ ծառայությունների դիմաց վճարների:

2. Ծրագրերի, նախագծերի և գործողությունների ավարտին բոլոր ապրանքները, սարքավորումները և այլ իրերը, որոնք դրանք տրամադրած Կողմը մշտական հիմունքներով չի փոխանցել ընդունող Կողմին, կվերաարտահանվեն՝ նույն կերպ ազատվելով սովորաբար գանձվող արտահանման տուրքերից և այլ հարկերից՝ բացառությամբ մաքսային գանձումների, պահեստավորման, փոխադրման և հարակից այլ ծառայությունների դիմաց վճարների և գանձումների:

3. Սույն Համաձայնագրի շրջանակում ծրագրերի, նախագծերի և գործողությունների իրականացման համար ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում ծրագիրն իրականացնող պետական հաստատությունը կկրի այդ ապրանքների մաքսազերծման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկման պատասխանատվությունը՝ իր համապատասխան ազգային օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ X

Սույն Համաձայնագրի դրույթները կարող են փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ու լրացումները կձևակերպ-

վեն սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի XI հոդվածում նկարագրված ընթացակարգով:

ՀՈԴՎԱԾ XI

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական իրավական պահանջների կատարման մասին մի Կողմի՝ մյուս Կողմին ուղղված վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրը:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ (5) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է համանման և միմյանց հաջորդող ժամանակահատվածներով մինչև Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին տեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին՝ գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց (6) ամիս առաջ:

3. Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի Համաձայնագրի ներքո իրականացվող ծրագրերի և/կամ պայմանավորվածությունների վավերության և տևողության վրա:

Կատարված է Բրազիլիա քաղաքում 2016թ. օգոստոսի 12-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պորտուգալերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն լեզվով տեքստը:

**Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝**

**Բրազիլիայի Դաշնային Հանրապետության
Կառավարության կողմից՝**